INTERNATIONAL MONETARY FUND
EXTERNAL RELATIONS DEPARTMENT

Մամուլի հաղորդագրություն թիվ. 11/344
ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ
22 սեպտեմբերի 2011 թ .

Արժույթի միջազգային հիմնադրամ
Վաշինգտոն, Կ.Օ. 20431 ԱՄՆ

## ԱՄՀ աշխատակազմի առաքելության Հայաստան կատարած այցի եզրափակման հայտարարություն

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) առաքելությունը, որը ղեկավարում էր Մարկ Հորթոնը, սեպտեմբերի 7- 20-ը այցելել է Երևան՝ «Երկարաձգվող ֆինանսավորման»(EFF)/«Երկարաձգվող վարկավորման (ECF)» ծրագրերի երրորդ ամփոփիչ ստուգման համար քննարկումներ անցկացնելու նպատակով: Այցի ավարտին պրն. Հորթոնն արել է հետևյալ հայտարարությունը.

«Քննարկումներն արդյունավետ են եղել, և առաջընթաց է արձանագրվել 2011 թվականի մնացած ժամանակահատվածի և 2012 թվականի համար նախատեսված մի խումբ քաղաքականությունների և միջոցառումների ուղղությամբ: Քննարկումները կշարունակվեն շաբաթվա վերջում՝ Վաշինգտոնում կայանալիք ԱՄՀ և Համաշխարհային բանկի տարեկան ժողովների ընթացքում:

«Ընդհանուր մակրոտնտեսական պայմանները բարելավվել են: Գյուղատնտեսության ճյուղի վերականգնման և արդյունաբերության և ծառայությունների ճյուղերի դինամիկայի շնորհիվ տնտեսության աճի արդյունքներն այս տարի կբարելավվեն՝ տնտեսության աճի 4.6 տոկոս մեր նախկին կանխատեսմանը համահունչ: Պակաս սատարող արտաքին պայմանների պարագայում տնտեսական աճի կանխատեսումը 2012 թվականին իջեցվել է մինչև 4 տոկոս, ընդ որում ռիսկերն ակնհայտորեն նվազման ուղղվածություն ունեն: Գնաճը զգալիորեն չափավորվել է՝ պայմանավորված ապրանքների համաշխարհային գների նվազմամբ և գյուղատնտեսության վերականգնմամբ: Ընդհանուր գնաճը օգոստոսին հասավ 4.8 տոկոսի (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ) և ակնկալվում է, որ 2011 թվականի մնացած ժամանակահատվածում և 2012 թվականին կմնա զսպված:

«Ծրագրի կատարողականն ընդհանուր առմամբ շարունակում է բավարար մնալ: Հարկաբյուջետային հաշվեկշիռը շարունակել է բարելավվել, ընդ որում ընդհանուր պակասուրդն ակնկալվում է, որ կնվազի՝ 2010 թվականի 5 տոկոսի դիմաց 2011 թվականին կազմելով 4 տոկոսից ցածր: Պարտքի կայունության ապահովման նպատակով ակնկալվում է, որ պակասուրդը կշարունակի նվազել 2012 թվականին: Այնուամենայնիվ, կառավարությունն ակնկալում է հարկաբյուջետային հնարավորությունների ստեղծում մասնավոր հատվածի կողմից առաջնորդվող աճը սատարելու և աղքատությունը նվազեցնելու համար՝ իրականացնելով հարկային եկամուտների ավելացմանն ուղղված կուռ փաթեթ: Փաթեթը կհիմնվի օրենսդրական նոր նախաձեռնությունների և հարկային վարչարարության նորացված ջանքերի վրա:

«Կենտրոնական բանկը շարունակում է ճկուն փոխարժեքի և գնաճի նպատակադրման ռեժիմի նկատմամբ հանձնառության դրսևորումը՝ արտարժութային միջամտությունները սահմանափակելով տատանողականության հարթման դեպքերով: Կենտրոնական բանկը շարունակում է նաև բանկային համակարգում ռիսկերի դիտանցման գործիքների հետագա բարելավումը:

«Շարունակվում է կառուցվածքային օրակարգի ուղղությամբ առաջընթացը, ընդ որում բարելավման նշաններ կան գործարար միջավայրում, հիմնականում՝ ստուգումների, մրցակցության օրենսդրության, ձեռնարկատիրական գործունեության գրանցման գործընթացների և ԱԱՀ-ի վերադարձի ուղղությամբ:

Պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել նախագահ Սերժ Սարգսյանի, վարչապետ Տիգրան Սարգսյանի, ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանի, կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանի, էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանի, էներգետիկայի և բնական պաշարների նախարար պրն. Արմեն Մովսիսյանի, գյուղատնտեսության նախարար պրն. Սերգո Կարապետյանի, ինչպես նաև պետական բարձրաստիճան պաշտոնյաների, միջազգային համայնքի, բանկային և գործարար հատվածների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Առաքելությունը ցանկանում է շնորհակալություն հայտնել Հայաստանի իշխանություններին և քաղաքացիներին իրենց ջերմության և հյուրընկալության համար»: